

աղէտիս եւ աւաղ թշուառութեանս, զի այս բարի սահմանս ամենեւին բարձեալ եւ հեռացեալ եղեն ազգաց մերոց. այլ եւ խառն ի խուռն եւ խառնափնտորեալ. ոչ մեծ երեւի 90 եւ ոչ փոքր, ոչ աշխարհական, ոչ կարգաւոր: Զի ոչ թէ զկղերիկոս, զմոնողոնս դատեն աշխարհականք, այլ եւ զքահանայս եւ զվարդապետս եւ զեպիսկոպոսս. եւ ոչ միայն դատին, այլ եւ բրածեծ առնեն, տուգանեն, 95 աքսորեն, թշնամանեն, նախատեն, եւ զոչ տվեալ իշխանութիւնս առնուն ի նոցանէ եւ կարգէն ձգեն եւ այլ բազում դարովանք տան եւ արհամարհանք, զոր անպատշաճ համարիմ եւ զրել աստ: Զի ոչ յԱստուծոյ երկնչին եւ 100 ոչ ի մարդկանէ ամաչեն, այլ լրբին եւ յանդգնին. եւ այս ոչ թէ միայն այժմ, այլ եւ ի սկզբանէ եւ ի ժամանակս թագաւորաց, թէ որպիսի՞ չարիք անցուցին ի գլուխս սուրբ եւ աստուածահաճոյ հայրապետացն մերոց Ներսէսի, Մեսրոբայ, Սահակայ եւ այլ սրբոցն, քրիստոնեայք գոլով. այլ եւ թոռանցն սուրբ Լուսաւորչին մերոյ: Զոր եւ զարժանահաս պատուհասն ընկալան յարդարադատ Տեառնէն. որովք բարձան թագաւորութիւնք եւ 110 իշխանութիւնք մեծահռչակ ցեղէն Արշակունեաց եւ Բագրատունեաց, նաեւ Պալճաւունեաց. եւ եղաք ծաղր եւ այսն կատականաց զրացեաց մերոց. եւ մատնեցաք ի ձեռս